տակուին սրուակաց գործածութիւնը սըբ-բազան իրաց և մարտիրոսաց արեան համար։ Զեմ գիտեր թէ կա՞ր ևս սովորոյթս զանոնք զետեղելու մեր մարտիրոսնե-րուն դամբաններուն մէջ։ Փոքրիկ սրուակ-ներ բիւրեղեայ կամ ապակիէ՝ կէս դար ա-ռաջ բարձր Հայոց մէջ ասա անդ դերբուկ-ներու խորը և հաւատացելոց տունը՝ իբրև թանկագին իր կը պահուէին. կային ալ, որ ուխտաւորները Սուրբ Կարապետէն իբր յիշատակ առած երկիւղածութեամբ տան մէկ պատուաւոր անկիւնը զետեղած էին։ Ա՛ռ այժմ դժուարին է աւելի ստոյգ տե-ղեկութիւններ ունենալ։ Ռ. Կ.



ՆԻՒԹԵՐ ՊՈՒԼԿԱՐԱՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՎԱՒԵՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Ֆիլիպէի ինչպէս նաև Պուլկարահայոց Պատ-մութեան համար անհրաժեշտ է գրութիւնս զոր գտած եմ ուրիշ կարևոր գրութեան մը հետ 17րդ դարուն գրուած ձեռագիր տետրակի մը մէջ։ Ըստ իս այս գրութիւնը եղած է սկզբնական բնագիրը իմ նախապէս հրատարակած «Վիպա-սանութիւն առման Ս. Գեորգ եկեղեցւոյ»[1] ևն գրուածքին. և հաւանական կը համարիմ որ ներկայ վաւերագրութեանս սկզբնական բնագի-րը Երեմիա Չելեպի Քեմիւրճեանի գրչին իսկ ըլլայ։ Ա՛ռ այժմ կ'ուզեմ մատնանիշ ընել թէ «Վիպասանութիւն» ուներ կարգ մը աշխարհա-գրական սխալներ՝ որոնց չենք հանդիպիր բնա-գրին մէջ։ Զբսեղով ոեռ բան լեզուին երև-միական ձոխութեան, կ'անցնիմ գրութեան, որ պատմականապէս կարևոր է հետևեալին պա-նուտես – ժամանակակցի հանգամանքով. առկ զատ կը ներկայանայ նաև Երեմիա Քեմիւր-ճեանի իբր մեկ ուրիշ գրութիւնը, որ մինչև այսօր անտիպ ու անծանօթ կը մնար[2]։

Արտաքսեալքս ի տանց, տարագրեալք ի բնա-կութեանց, վտարեալք ի հայրենեաց, պակասեալք ի ստացուածոց, կործանեալք ի փառաւորու-թեանց, տապացեալք յօդոցն խորշակաց, կոչ-կոճեալք . . . . . վշտացեալք ընդ նհանջիլն կուսանաց ի սովոյս, կսկծեալք ընդ տագնապի մանկանց ի ծարաւոյ, աղէկիզեալք ընդ տեսիլ այրեացն ի նեղութիւնս որ . . . . . ընդ տառապանս որբոց. հառաչեալք ընդ տկարութիւն ծերոց և կականեալք ընդ ողբս մանկանց. ձայն արկեալ զուժի կանայք սակս մեռելոց որ ընդ ճանապարհայն, սիրելիք ի սի-րելեացն անջատելոց յոգոց հանէին, մարք ի զաւերացն զրկելոց արտասուօք զբօսնուին, և հարք ընդ կորուստ որդւոցն աղիողորմ երգօք նուագէին, սառուցանէին զոգմունս լալականաց զաւերաց՝ և կին ընկերի իւրում ողբայր ընդ մարգարէին Երեմիայ, թէ «Ո՞ տայր զգլուխս իմ ի ջուր և զաչս իմ աղբիւր արտասուաց» զի լայի զտիւ և զգիշեր զվիրաւորեալս սրտիւ ի ժո-ղովրդեան իմոյ քանզի եհաս առածն Երեմիայ Մարգարէի ի վերայ նոցա կատարելապէս թէ ննջէին ամօթով իւրեանց, և ծածկեցան անար-գանօք, բարձան ձայնք օրհնութեան Տեառն ընդ ճանապարհս օտարս, զի ջամբեաց նոցա զվտանգ, և զջուր դառնութեան արբոյց Տէր և ցրուեաց զդոսա ընդ ազգս զոր ոչ գիտացին։ Բեկաւ Մովաբ զուժ տուք ի Զոգովր, զի լցաւ Ալովմ լալովք. ելցէ լալով ընդ ճանապարհն Որոնայիմայ։ Տագ-նապ և գոյժ բեկման լուայ. եղաւ յապականու-թիւն կորստեան ընդ ամենայն ելս անցին թշուա-ռացեալք և ոչ գոյր խաղաղութիւն ամենայն մարմնոյ. վիճակքն նոցա ոչ եղև յօգուտ նոցա և յամօթ եղեն ի պարծանաց իւրեանց և ամե-նայն անձինք քրձազգած եղեն վրիպեալք ի բա-րութեանց և անկեալք ի չուառութիւն. մերժե-ցեալք ի միաբանութենէ և հասեալք ի թշուա-ռութիւն, բարձան ձայնք ցնծացելոց և հատան խրախճութիւնք հարսին և փեսին և արհաւրօք պաշարեալ. զի և ընդ ելս իրին քարշեալ տառա-պէին, և զկատարածէն կասկածեալ մաշեալք հիւծէին զոս և հասուցեալ ի ծով Գերման լային ի նաւս երեք և երիւք ճղիւք տարանջատեալք ի միմեանց. մինն տնկեալ ի դղեակն Սիզուպօլսոյ. և միւսն ի Ղալաթա Կոստանդնուպոլսոյ, և միւսն վարեալ ի հարաւակողմ յանդիման Պոնտոսի, ի բախմանէ զանազան հողմոցն մրրկելոց ընդ

1. Բազմվեպ. 1927, թիւ 8–9, էջ 237։

2. Այս առթիւ կ'ուզեմ յիշել նաև որ Տոքթ. Վահր. Յ. Թորգոմեանի Բազմավէպի այս տարուան (1929) մայիսի թիւին մէջ իմ Պուլկարահայոց Տապանագրութիւն-ներուս թիւ 48 և 50ի մասին ըրած ճշդումը ուղիղ է։ Այդ շփոթութիւնը առաջ եկած է Փ. Պոլսոյ և Կ. Պոլսոյ այդ նիւթերու խառնուելէն։ Երախտ եմ որ միայն այդ եղաւ շփոթութիւնը և այդ ալ աչալուրջ Տոքթ. Թորգոմեանի շնորհիւ ճշդուեցաւ։